ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Տիգրան Գրիգորյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության իրական հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2023 թվականի հունիսի 19-ից մինչև հուլիսի 14-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Վիեննայի միացյալ ինստիտուտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել դասընթացին, որի ընթացքում ներկայացվել են մակրոտնտեսական ախտորոշման գործիքակազմը և քաղաքականության առանձնահատկությունները՝ շեշտադրելով հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականությունները, ինչպես նաև կառուցվածքային բարեփոխումները, ֆինանսական հատվածի կայունության կարևորությունը և խնդիրների բացահայտման մոտեցումները, քաղաքական տնտեսության առանձնահատկությունները (այդ թվում՝ Ավստրիայի քաղաքական տնտեսության նկարագիրը և հիմնախնդիրները), ԱՀԿ-ի էվոլուցիոն պատմությունը, գործող կարգավորումները և հեռանկարները, աղքատության և անհավասարության առկա իրավիճակը, ինչպես նաև աշխատանքի շուկայի հետ կապված հիմնախնդիրները Եվրոպական և Ասիական երկրներում: Միաժամանակ ներկայացվել են աշխատանքային գործընթացում արդյունավետ կոմունիկացիայի անհրաժեշտությունը և դերը: Ընդհանուր առմամբ, դասընթացն ուներ համապարփակ բնույթ և ընդգրկում էր մակրոնտեսական վերլուծությունների և դրանց հիման վրա քաղաքականությունների մշակման առանձնահատկությունների համակողմանի ընդհանրական նկարագրեր՝ արժևորելով վերջիններիս կիրառական նշանակությունը:

5. Քննարկված թեմաները՝

1. Արդյունավետ կոմունիկացիաներ, արդյունավետ թիմային աշխատանք
2. Քաղաքական տնտեսության վճռորոշ նշանակությունը, Ավստրիայի քաղաքական տնտեսության նկարագիրը և հիմնախնդիրները
3. Աղքատությունը, անհավասարությունը և աշխատանքի շուկան Եվրոպական և Ասիական երկրներում
4. Ֆինանսական հատվածի հիմնախնդիրները
5. Առևտրի համաշխարհային կազմակերպությունը

6. Մակրոտնտեսական ախտորոշման գործիքակազմը և քաղաքականության առանձնահատկությունները

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, ուսումնական խմբային խաղեր, պատրաստվել շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի մասնակիցների հետ: Միաժամանակ, ՀՀ պարտքի կայունության վերաբերյալ մշակվել և ներկայացվել է շնորհանդես:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

17 հուլիս, 2023թ.